Հավելված

Հաշվեքննիչ պալատի

2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 241-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ.....6

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 9

II.ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 15

1. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ 15

2. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագիր 21

3. Տարրական ընդհանուր հանրակրթություն 24

4. Հիմնական ընդհանուր հանրակրթություն 25

5. Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ 26

6. Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում 29

7. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր 30

8. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (ՏրանշԱ,Բ) 31

9. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն 31

10. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ 33

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ.....36
IV. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 45
V. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ.....,51

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի օգոստոսի 7-ի թիվ 138-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	2020 թվականի վեց ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության ընթացակարգը	Հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1–ից մինչև 2020 թվականի հունիսի 30–ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020 թվականի օգոստոսի 17–ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 31-ը:
Հաշվեքննության կասեցում	2020 թվականի սեպտեմբերի 30–ի թիվ 168-Ա որոշում:
Հաշվեքննության վերսկսում	2020 թվականի նոյեմբերի 20–ի թիվ 171-Ա որոշում:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը: Հաշվեքննությունը իրականացվել է Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության <<ISSAI 100 - Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները>>, <<ISSAI 200-Ֆինանսական աուդիտի հիմնարար սկզբունքները>>, <<ISSAI 400 – Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները>> ստանդարտների համաձայն:

Հաշվեքննության չափանիշները

1. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք,
2. «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք
3. «Գնումների մասին» ՀՀ օրենք,
4. ''Ավտոմոբիլային ճանապարհների մասին'' ՀՀ օրենք
5. ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի թիվ 265-Ն որոշում,
6. ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ 1419-Ն որոշում,
7. ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշում,
8. ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի թիվ 706-Ն որոշում,
9. ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշում,
10. Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆի-նանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրեր և այլն:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում[1]

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի հինգերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է հաշվեքննիչ պալատի անդամ Դ. Չիբուխչյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թվականի օգոստոսի 7-ի թիվ 138-Ա որոշման հիման վրա հաշվեքննություն է իրականացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում 2020թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ:

Հավեքննությունը կատարելու ժամկետ է սահմանվել 2020 թվականի օգոստոսի 17-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը, սակայն ՀՀ կառավարության 2020թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1586-ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հաստատելու հետևանքով հաշվեքննության իրականացումն դարձել է անհնարին: Ելնելով ստեղծված իրավիճակից հաշվեքննիչ պալատի 2020 թվականի սեպտեմբերի 30–ի թիվ 168-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել է:

Անկանխատեսելի հանգամանքների վերացմամբ պայմանավորված Հաշվեքննիչ պալատի 20.11.2020թվականի թիվ 171-Ա որոշմամբ հաշվեքննությունը վերսկսվել է, որն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի հինգերորդ վարչության կողմից:

Հաշվեքննությամբ արձանագրված հիմնական փաստերն են:

1049-11001 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների հետ կապված առկա են ''Ավտոմոբիլային ճանապարհների մասին'' ՀՀ օրենքի պահանջներին առնչվող անհամապատասխանություններ:

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ցանկում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային որոշ ճանապարհների ըստ նշանակության դասակարգումը չի համապատասխանում ''Ավտոմոբիլային ճանապրահների մասին'' ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին: Մասնավորապես

Որպես միջպետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 387 կմ ավտոճանապարհները հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ և դրանց պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են, որպես հանրապետական նշանակության ավտոճանապարհների պայմանագրային գները **55,730.4 հազար դրամով**:

167,8 կմ ավտոճանապարհներ հանդիսանում են *տեղական նշանակության* ճանապարհներ, որոնց պետական ճանապարհային մարմինը տնօրինման մասով ոչ թե ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է այլ ՀՀ մարզպետներն_են: Բացի այդ պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես տեղական նշանակության ավտոճանապարհների համար առաջարկած պայմանագրային գները **37,982.3 հազ դրամով**:

34,5 կմ երկարությամբ ճանապարհներ, որոնց պահպանման համար վճարվել է ***10,594.7 հազ.*** դրամ, հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ:

Որպես հանրապետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 569,3 կմ ճանապարհները հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ, որոնց պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է **372,168.9 հազ. դրամ**:

58,7 կմ-ն դաշտամիջյան ճանապարհներ են, որոնցից 37,1 կմ երկարությամբ ճանապարհահատվածների պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է **23,522.5 հազ. դրամ,** այնինչ ՀՀ օրենսդրությամբ այդ ճանապարհների պահպանություն չի նախատեսվում (հավելված 8):

7.6 կմ-ն Հրազդան քաղաքի փողոց է, որի պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է **5,334.9 հազ. դրամ:**

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ մասի համաձայն Կապան, Իջևան և Արմավիր քաղաքների տարածքներում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների միայն երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքներն են իրականացվում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից, այնինչ կատարողականներով հաշվարկվել է ամբողջ ճանապարհածածկույթի համար, ինչի արդյունքում ավել է հաշվարկվել **7,981.2 հազ. դրամ:**

2020 թվականի համար ''Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և անվտանգ երթևեկության ծառայություններ'' ծրագրով համաձայնագրերը կապալառու կազմակերպությունների հետ կնքվել են 2020թ. փետրվարին, այսինքն 2020 թվականի հունվար ամսին: Պահպանում իրականացնող ընկերությունները պահպանում են իրականացրել չունենալով չափորոշիչներ, թե ինչ մակարդակի

պահպանություն պետք է իրականացնեն, իսկ պատվիրատուն ընդունել է այդ աշխատանքների կատարման համար կատարողականները և փաստաթղթավորել, որ պահպանության ընթացքում ապահովվել են սահմանված չափանիշները՝ չունենալով այդ չափանիշները :

1049-21004 ''Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրում առկա են անհամապատասխանություններ: Ծրագրի սկզբից մինչև 30.06.2020թվականը ներառյալ նախատեսված 13,334,818.4 հազ. դրամ աշխատանքի դիմաց իրականացվել է ընդամենը 2,513,794.6 հազ. դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ, կամ **18.85 տոկոս:**

''Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն'' ՊՈԱԿ-ն և ''ԱԼՏԱ ՎԻՊ'' ՍՊԸ-ն ելնելով այն հանգամանքից, որ 06.02.2019թվականին կնքված խորհրդատվական ծառայությունների պայմանագրի գործողության ժամկետը ավարտվում է 13.12.2018թվականին, պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ կնքել են համաձայնագիր 2019թվականի փետրվարի 6-ին՝ պայմանագրի ժամկետի ավարտից 54 օր հետո և պայմանագրի ժամկետի ավարտը երկարաձգել մինչև 2019թվականի օգոստոսի 13-ը:

2020թվականի առաջին կիսամյակում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ''Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրի փաստացի ծախսը ''Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի'' հաշվետվությունում, որպես փաստացի կատարված ծախս, պակաս է ցույց տրվել 242,744.4 հազ, դրամով:

1146-11002 Հիմնական ընդհանուր հանրակրթություն ծրագրում առկա է սովորողների միջին գնահատականի անհամապատասխանություն, սովորողների միջին գնահատականը գիտելիքների ստուգման արդյունքում տարեկան ճշտված պլանով և 2020թվականի 1-ին կիսամյակում նախատեսվել է 13 բալ /<u>ՀՀ-ում գործում է գիտելիքների գնահատման 10 բալային համակարգ</u>/, փաստացի սովորողների միջին գնահատականը կազմել է 8 բալ:

1157-12002 Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ ծրագրով առկա է անհամապատասխանություն: 2020 թվականի առաջին կիսամսյակում Երևան քաղաքի արտաքին լուսավորությամբ ապահովված փողոցների երկարությունը և արտաքին լուսավորությամբ ապահովված օբյեկտների պլանավորված թիվը ավելացել է, իսկ պետական բյուջեից հատկացված միջոցները նվազել, սակայն քանակական ցուցանիշները չի

փոփոխվել: Փաստացի կատարվել է պլանավորածից ավել աշխատանք, բայց ծախսը չի ավելացել:

2020 թվականի առաջին կիսամյակի համար պլանավորված բյուջեի ծախսի նվազեցումը նախարարության կողմից հաշվի չի առնվել և համապատասխան փոփոխություն չի կատարվել 2020թվականի հունվարի 30-ին նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված ''ՀՀ 2020թվականի պետական բյուջեի մասին'' ՀՀ օրենքով նախատեսված մի շարք ծրագրերով ''Երևանի քաղաքապետարանին նպատակային հատկացումների /սուբվենցիաների/ մասով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավունքների փոխանցման'' թիվ 1 պայմանագիրում'', որի հիման վրա Երևանի քաղաքապետարանին է փոխացվել ծրագրով նախատեսված գումարները:

1157-12017 Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագրով առկա է անհամապատասխանություն, 2020 թվականի առաջին կիսամյակում նախատեսված Գյումրի քաղաքի փողոցների հիմնանորոգումից, փաստացի իրականացվել է նախատեսվածից պակաս աշխատանքներ:

1157-12018 Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագրով (Տրանշ Ա, Բ) առկա է անհամապատասխանություն, 2020 թվականի առաջին կիսամյակում նախատեսված Գյումրի քաղաքի փողոցների հիմնանորոգումից, փաստացի իրականացվել է նախատեսվածից պակաս աշխատանքներ:

1189-12001 Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրով առկա է անհամապատասխանություն, աշխատանքներն իրականացվել են պայմանագրերի ընդհանուր պայմանների 35.3, 36.1 և 36.2կետերի պահանջների խախտմամբ: Պայմանագրերով նախատեսված աշխատանքների ավարտի ժամկետը երկարացվել է այնպիսի հիմնավորումներով, որոնք ըստ էության չեն առնչվում պայմանագրի կատարման հետ:

Աշխատանքների ավարտի ժամկետի երկարացումը հիմնավորվել է նաև, COVID-19 համավարագով պայմանավորված, արտակարգ դրության ընթացքում շինարարական աշխատանքների իրականացման սահմանափակմամբ: Հարկավոր է նշել, որ աշխատանքների ավարտի ժամկետը երկարացվել է ավելի շատ օրերի քանակով, քան սահմանված է պարետի համապատասխան որոշումներով:

Կապալառուների կողմից չեն կազմվել և Ծրագրի ղեկավարի հաստատմանը չեն ներկայացվել 90 օրյա հաճախականությամբ թարմացված ծրագրերը

Դավիթ Չիբուխչյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
21 դեկտեմբերի 2020 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2020 թվականի 1-ին կիսամյակ

հազ.դրամ

Հ/Հ	Միջոցառում	Հոդված	Հոդվածի անվանում	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
.1	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգերթևեկության ծառայություններ	425100	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	9,873,959.30	4,121,383.00	2,880,228.00	2,880,228.00
.2	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի ծրագրի կառուցում և հիմնանորոգում	511300	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	13,015,282.90	7,672,600.00	636,406.34	797,566.10
.3	Տարրական ընդհանուր հանրակրթություն	451100	- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական	7,259,109.40	3,554,615.40	3,487,494.70	3,487,494.70

			կազմակերպություններին				
.4	Հիմնական ընդհանուր հանրակրթություն	451100	- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	10,254,680.70	5,021,311.70	4,892,793.90	4,897,143.80
.5	Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ	463200	- Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին	2,124,862.30	898,390.70	898,390.70	898,390.70
.6	Երևանի մետրոպոլիտեն ովուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում	451100	- Սուբսիդիաներոչ ֆինանսականպետականկազմակերպություններին	2,801,071.00	1,425,702.00	1,425,701.94	1,425,701.94
.7	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր	511300	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5,211,909.70	3,127,145.90	707,226.53	707,226.53
.8	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (ՏրանշԱ, Բ)	511200	- Շենքերի և շինությունների շինարարություն	1,392,330.60	835,398.40	353,353.69	72,726.40

.9	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն	511200	- Շենքերի և շինությունների շինարարություն	9,233,794.80	4,574,016.00	1,160,215.87	2,284,612.39
10	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ	511200	- Շենքերի և շինությունների շինարարություն	8,479,292.60	2,250,503.50	989,154.29	989,154.29
				69,646,293.30	**33,481,066.60**	**17,430,965.96**	**18,440,244.86**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՊԸՊ	Պայմանագրի ընդհանուր պայման
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԱԶԲ	Ասիական զարգացմա բանկ
ՊՀՊ	Պայմանագրի հատուկ պայման

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունից ընտրված հաշիվների հաշվեքննությամբ, պարզվել է.

1. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների իրականացնելու համար 2020թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 9,873,959.3 հազ. դրամ: 2020թվականի առաջին կիսամսյակի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 4,121,383.0 հազ. դրամ /1-ին եռամսյակ 910,625.0 հազ. դրամ/, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 2,880,228.0 հազ. դրամ/ 1-ին եռամսյակ 899,833.9 հազ. դրամ/:

Ծրագիրը ներառել է միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանման, պարբերական պահպանման (միջին նորոգման), նշագծման, մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման, արհեստական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքները:

Ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներն իրականացնվել է 40 տարածաշրջանների (լոտերի) ավտոճանապարհների պահպանման համար գործող պայանագրերի շրջանակներում կնքված 33 համաձայնագրերի հիման վրա:

Մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման աշատանքներն իրականացվել է 10 մարզերում թվով 4 ընկերությունների, գծանշման աշատանքներն 10 մարզերում թվով 3 ընկերությունների, իսկ թվով 3 թունելների և 5 կամուրջների պահպանման և շահագործման աշխատանքները հինգ ընկերությունների միջոցով, 2015 թ-ին կնքված պայմանագրերի հիման վրա կազմված համաձայնագրերի շրջանակներում:

2020թ. ծրագրում ներառվել է Մ1, Երևան – Աշտարակ – Գյումրի -Վրաստանի սահման և Մ2, Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի - Իրանի սահման ճանապարհահատվածների արտաքին լուսավորման համակարգի պահպանության աշխատանքները, որը իրականացրել է ‘‘Զենոն’’ ՍՊԸ-ն, 2020թ. 1-ին

կիսամսյակում փաստացի ծախսը կազմել է 19,556.3 հազ. դրամ:

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հավելվածի համաձայն 2020թվականի համար սահմանվել է 67 կիլոմետր երկարությամբ ճանապարհների պարբերական պահպանման /միջին նորոգման/ աշխատանքներ: 2020թվականի «Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով» հունվար-հունիս ամիսներին աշխատանքներ չի նախատեսվել և չի կատարվել:

Չնայած այն հանգամանքին, որ 2020թվականի 1-ին կիսամյակի ընթացքում՝ ըստ պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հավելվածի, պարբերական պահպանման աշխատանքներ չի կատարվել, սակայն նախարարության կողմից ներկայացրած ''Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի'' հաշվետվությունում, որպես փաստացի կատարված ծախս նշել է 2,880,228.0 հազ. դրամ, որի դիմաց վճարվել է նույնպես 2,880,228.0 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանից գրավոր պահանջել ենք տրամադրել հաշվեքննվող ''Պարբերական պահպանում /միջին նորոգում/ ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների, ծառայությունների մատուցման, ապրանքների, մեքենաների, սարքավորումների մատակարարման, փաստացի ծախսը հիմնավորող փաստաթղթերի (կատարողական ակտեր, հաշիվ ապրանքագրեր, հաշվետվություններ, աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություններ և այլն), պայմանագրերի փոփոխությունների և դրանց հիմքերի վերաբերյալ տեղեկատվություն, ***սակայն պահանջված տեղեկատվությունը չի տրամադրվել:***

2020 թվականի ճշտված պլանով՝ նախատեսվել է իրականացնել 3477.6 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհների ձմեռային պահպանման և 3002.5կմ ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներ սակայն կնքված համաձայնագրերով 2020թ նախատեսվել է իրականացնել ձմեռային պահպանման աշխատանքներ 3336.94 կմ ճանապարհների վրա, ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներ 2889.2 կմ ճանապարհների վրա, կամ համապատասխանաբար 140.7 կմ-ով և 113.3 կմ-ով պակաս :

Կնքված համաձայնագրերի համաձայն 1-ին կիսամսյակում նախատեսվել է իրականացնել միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ 2,573,614.6 հազ. դրամ գումարի չափով, կատարողականը կազմել

է 2,547,524.9 հազ. դրամ, տարբերությունը 26,089.7 հազ. դրամ: 2020թ. 1-ին կիսամսյակի վճարման ժամանակացույցով նախատեսվել է վճարել 2,106,377.2 հազ. դրամ, փաստացի վճարումը կազմել է 1,997,278.3 հազ. դրամ, կամ 109,098.9 հազ. դրամով պակաս (հավելված 1) :

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ մասով սահմանվել է, որ Գյումրի, Վանաձոր, Կապան, Իջևան, Վաղարշապատ և Արմավիր քաղաքների տարածքներում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների միայն երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքներն են իրականացվում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից:

Գյումրու, Վանաձոր և Վաղարշապատ քաղաքների տարածքներում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածները չեն ներառվել 2020թվականի ձմեռային և ընթացիկ պահպանման աշխատանքների համաձայնագրերում, իսկ **Կապան**, **Իջևան և Արմավիր** քաղաքների տարածքներում գտնվող 21.5 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհները ընդգրկվել է ձմեռային և ընթացիկ պահպանման համաձայնագրերում: Կարգի համաձայն ճանապարհների ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքները, բացի երթևեկելի մասը, ներառում են նաև հողային պաստառը և օտարման շերտը, արհեստական կառուցվածքները և կահավորանքը: Համաձայն նույն Կարգի աղյուսակ 4-ի, ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների ապահովման ընդհանուր արժեքում ծածկը (երթևեկելի մասի) կազմում է ընդամենը 55%-ը, իսկ ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակ՝ 70%-ը: Հետևաբար նշված ճանապարհների ամառային պահպանման աշխատանքների համար պետք է հաշվարկվեր պայմանագրային գնի 55%-ը, իսկ ձմեռայինի դեպքում 70%-ը, ինչը չի կատարվել և ինչի արդյունքում 2020թ. 1-ին կիսամսյակում ավել է հաշվարկվել **7,981.2 հազ. դրամ/** 1-ին եռամսյակ 2,180.7հազ. դրամ, 2-րդ եռամսյակ 5,800.5 հազ. դրամ / (հավելված 2) :

Համաձայն ''Ավտոմոբիլային ճանապրահների մասին'' ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերի.

- Միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են Հայաստանի Հանրապետության ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին *և ապահովում են*

միջազգային տրանսպորտային հաղորդակցություն, ինչպես նաև խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները և տրանսպորտային հանգույցները, որոնք չունեն առանձին պայմանանիշ:

- Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են հանրապետության քաղաքները մայրաքաղաքին և միմյանց, մշակույթային, հոգևոր կենտրոնների և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հետ, խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները, ինչպես նաև տրանսպորտային հանգույցները որոնք չունեն առանձին պայմանանիշ:
- Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհների հետ:

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանկի ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշ ճանապարհների ըստ նշանակության դասակարգումը չի համապատասխանում ''Ավտոմոբիլային ճանապրահների մասին'' ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին: Մասնավորապես

- ✓ **Որպես միջպետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից**

387 կմ ավտոճանապարհները հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ (կապում են ՀՀ ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին, սակայն չեն ապահովում միջազգային տրանսպորտային հաղորդակցություն, հանրապետության քաղաքները մայրաքաղաքին, միմյանց և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին: Նշված ավտոճանապարհներից 1-ին եռամսյակում ձմեռային պահպանությունում ներառվել են 319.1 կմ ավտոճանապարհներ, իսկ 2-րդ եռամսյակում ամառային պահպանությունում 289,94 կմ ավտոճանապարհներ: Այս ավտոճանապարհների պահպանման աշխատանքների համար 1-ին կիսամյակի կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են, որպես հանրապետական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար կապալառու

ընկերությունների առաջարկած պայմանագրային գները **55,730.4 հազար դրամով,** որից 1-ին եռամսյակում 34,512.0 հազ, դրամ (հավելված 3 և հավելված 4):

167,8 կմ ավտոճանապարհներ հանդիսանում են *տեղական նշանակության* ճանապարհներ (կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհներին):

Համաձայն ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն 3-րդ մասի 2-րդ կետի ա) ենթակետի մարզային նշանակության ավտոճանապարհների պետական ճանապարհային մարմինը տնօրինման մասով ոչ թե ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է, այլ ՀՀ մարզպետները: Նշված ատոճանապարհներից 1-ին եռամսյակում սպասարկվել է 130,5 կմ, իսկ 2-րդ եռամսյակում 125,8 կմ երկարությամբ ճանապարհներ, որպես միջպետական նշանակության ճանապարհներ, պահպանության համար հաշվարկվել **է 125,102.4 հազ**. դրամի կատարողական/ 1-ին եռամսյակ 49,389.5 հազ դրամ/: Ընդ որում նշված ավտոճանապարհների պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես տեղական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար նույն կապալառու ընկերությունների առաջարկած պայմանագրային գները **37,982.3 հազ դրամով** /1-ին եռամսյակ 6,566.8 հազ, դրամ/ (հավելված 5):

- 34,5 կմ երկարությամբ ճանապարհներ, որոնց պահպանման համար 1-ին կիսամյակում վճարվել է ***10,594.7 հազ.*** դրամ/ 1-ին եռամսակում 6,383.9 հազ դրամ/, հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ որոնց պահպանման աշխատանքներ ՀՀ օրանսդրությամբ չի նախատեսվում և չի իրականացվում (հավելված 6):

✓ **Որպես հանրապետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից**

569,3 կմ ճանապարհները հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ: Նշվածներից 1-ին և 2-րդ եռամսյակներում պահպանություն է իրականացվել համապատասխանաբար 492,1 կմ և 440,6 կմ երկարությամբ ճանապարհահատվածների վրա, որոնց պահպանության համար 2020թ. 1-ին եռամսյակի կատարողականներով հաշվարկվել է **138,114.1 հազ. դրամ**, իսկ 2-րդ եռամսյակում՝ **234,054.8 հազ. դրամ** (հավելված 7): Ընդ որում այս ցանկում առկա Հ 28-Մեղրաձոր-Մարգահովիտ-Մ8 ճանապարհը անցանելի չէ, չի ապահովում տրանստորտային հաղորդակցություն, սակայն 2020 թվականին դրա ձմեռային պահպանության համար հաշվարկվել է 1,024.0 հազ. դրամ:

➢ 58,7 կմ-ը դաշտամիջյան ճանապարհներ է: Այս ճանապարհներից 1-ին եռամսյակում 37,1 կմ երկարությամբ ճանապարհահատվածների պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է **8,018.5 հազ. դրամ,** իսկ 2-րդ եռամսյակում 28,7կմ երկարությամբ ճանապարհահատվածների պահպանության համար հաշվարկվել է **15,504.0 հազ. դրամ,** այնինչ ՀՀ օրենսդրությամբ այդ ճանապարհների պահպանություն չի նախատեսվում (հավելված 8):

➢ 7.6 կմ-ն Հրազդան քաղաքի փողոց է, որի պահպանության համար 2020թ. 1-ին կիսամսյակի կատարողականներով հաշվարկվել է **5,334.9 հազ. դրամ:**

24.4 կմ-ը միջպետական նշանակության ավտոճանապարհ:

- 2020թվականի 1-ին կիսամյակում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրարապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման ծրագրով նախատեսվել էր իրականացնել 487,017.4 հազ. դրամի աշխատանքներ, կատարողականը ըստ նախարարության կոմից ներկայացված տեղեկանքի կազմել է 469,465.1 հազ. դրամ, կամ 17,552.3 հազ. դրամով պակաս : 2020թ. 1-ին կիսամյակի վճարման ժամանակացույցով նախատեսվել է 418,023.3 հազ. դրամ , փաստացի վճարումը կազմել է 340,890.2 հազ. դրամ, կամ 77,133.1 հազ. դրամով պակաս (հավելված 9) :

Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրարապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող արհեստական կառույցների պահպանման համար 2020թվականի 1-ին կիսամյակում նախատեսվել է իրականացնել 121,026.2 հազ. դրամի աշխատանքներ, կատարողականը կազմել է 121,026.2 հազ. դրամ: 2020թ. 1-ին կիսամյակի վճարման ժամանակացույցով նախատեսվել և վճարվել է 100,855.2 հազ. դրամ (հավելված 10) :

1-ին կիսամյակում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրարապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա նախատեսվել է իրականացնել 357,799.5 հազ. դրամի նշագծման աշխատանքներ, փաստացի կատարողականը կազմել է 181,705.8 հազ. դրամ, տարբերությունը կազմում է 176,093.7 հազ. դրամ: 2020թ. 1-ին կիսամյակի վճարման ժամանակացույցով նախատեսվել է վճարել 286,539.5 հազ. դրամ, փաստացի վճարումը կազմել է 128,369.5 հազ. դրամ (հավելված 11) :

2020թ.-ի. կնքված համաձայնագրերով 1 քմ նշագծման աշխատանքների պայմանագրային գները չեն փոփոխվել, սակայն 1 քմ նշագծման աշխատանքների արժեքները ըստ մարզերի էականորեն տարբերվում են: Այսպես, եթե

Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մազերում նշագծման աշխատանքերի միավոր արժեքը (1 քն) կազմում է 0.88 հազ. դրամ, ապա մնացած մարզերում 1.145-1.150 հազ. դրամ, կամ 30.7 %-ով ավելի:

2020 թվականի համար ''Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և անվտանգ երթևեկության ծառայություններ'' ծրագրով համաձայնագրերը կապալառու կազմակերպությունների հետ կնքվել են 2020թ. փետրվարին, այսինքն 2020 թվականի հունվար ամսին, պահպանում իրականացնող ընկերությունները պահպանում են իրականացրել չունենալով չափորոշիչներ, թե ինչ մակարդակի պահպանություն պետք է իրականացնեն, իսկ պատվիրատուն ընդունել է այդ աշխատանքների կատարման համար կատարողականները և փաստաթղթավորել, որ պահպանության ընթացքում ապահովվել են սահմանված չափանիշները՝ չունենալով այդ չափանիշները :

Հաշվեքննվող օբյեկտի արձագանքը

Հաշվեքննիչ պալատի 08.12.2020թվականի թիվ 2 արձանագրության վերաբերյալ հետևյալ դիտողություններն է հայտնել ,,Ճանապարհային դեպարտամենտ'' ՊՈԱԿ-ը:

1. ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 265-Ն որոշման մեջ ներառված 6 քաղաքների պահպանումն իրականացվում է միայն երթևեկելի մասի սահմաններում: Կապալառուն մրցույթին ներկայացնում է 1 կմ ճանապարհի պահպանման միջինացված արժեքը՝ քաղաքային և միջպետական ավտոճանապարհների համար: Գինը ձևավորվում է հաշվի առնելով տվյալ հատվածի ճանապարհային նշանների քանակը, արհեստական կառույցները, երթևեկելի մասի լայնությունը: Առաջարկում ենք վերանայել ներկայացված դիտարկումը և չներառել այն արձանագրված անհամապատասխանությունների ցանկում:

2. Չնայած, որ Ավտոմոբիլային ճանապարհների մասին ՀՀ օրենքը սահմանում է ավտոմոբիլային ճանապարհների դասակարգման չափանիշները, ավտոմոբիլային ճանապարհների անվանական ցանկը հաստատված է ՀՀ կառավարության 13.02.2014թ. թիվ 265-ն որոշմամբ: Աշխատանքների ընդունման գործընթացում մասնակիցները չունեն այլ ընտրություն, քան առաջնորդվել վերոնշյալ կառավարության որոշմամբ սահմանված ցանկով և պահանջներով: Խնդրում ենք վերանայել ներկայացված դիտարկումը և չներառել այն արձանագրված անհամապատասխանությունների ցանկում:

Հաշվեքննության օբյեկտի կողմից ''Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ'' ծրագրի վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ, ինչը չի ընդունվել:

2. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագիր

''Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրի համար 2020թվականին ՀՀ պետական բյուջեից նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 13,015,282.9 հազ. դրամ, իսկ 2020թվաանի առաջին կիսամյակի ճշտված պլանով 7,672,600.0 հազ.դրամ /1-ինեռամսյակ 3,650,000.0հազ. դրամ/, 1-ին կիսամյակում դրամարկղային ծախսը կազմել է 636,406.3 հազ. դրամ / 1-ին եռամսյակ 379,921.5 հազ. դրամ/, փաստացի ծախսը 797,566.1 հազ. դրամ / 1-ին եռամսյակ 296,572.3հազ. դրամ/:

«Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում կնքվել է 3 պայմանագիր՝ «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ և ''Բլաք ՍԻ Գրուփ ՀՁ-ի հետ (պայմանագրի CW-ICB-M6/2016-2) գումարով 2,865,222.9հազ. դրամ, «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի հետ (CW-ICB-M6/2016-3) գումարով 4,719,096.2 հազ.դրամ և «Հորիզոն-95» ՍՊԸ ու ,,Օբերոսլեր Կավ Պիետրոս'' ընկերության հետ (CW-ICB-M6/2016-1) գումարով 4,876,787.4հազ. դրամ: Պայմնագրերը կնքվել են 2017 թվականի նոյեմբերի 30-ին 900 օր ժամանակահատվածով, իսկ կապալառուներին ծանուցման համաձայն աշխատանքների մեկնարկի սկիզբ է նախատեսվել 2018 թվականի մայիսի 29-ը:

2020թվականի առաջին կիսամյակի ընթացքում «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 7,672,600.0հազ. դրամ աշխատանքների դիմաց իրականացվել է 692,561.7հազ. դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ, «Ա.Ա.Բ.ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ 437,806.0 հազ. դրամ, «Սուարդի» ԲԲԸ 254,755.7 հազ. դրամ, «Հորիզոն-95» ՍՊԸ-ի կողմից աշխատանքներ չի կատարվել: Կատարված աշխատանքների դիմաց «Ա.Ա.Բ.ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ին վճարվել է 296,210.6 հազ. դրամ, «Սուարդի» ԲԸ-ին 242,017.8 հազ. դրամ, իսկ «Հորիզոն-95» ՍՊԸ-ին 98,177.8 հազ. դրամ: Կառուցման և հիմնանորոգման աշխատանքների դիմաց վճարումը կազմել է 636,406.3հազ. դրամ: Ծրագրի սկզբից մինչև 30.06.2020թվականը ներառյալ նախատեսված 13,334,818.4 հազ. դրամ աշխատանքի դիմաց իրականացվել է ընդամենը 2,513,794.6 հազ. դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ, կամ **18.85 տոկոս**

/«Ա.Ա.Բ.ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ -22.69տոկոս, «Սուարդի» ԲԸ- 11.02 տոկոս, «Հորիզոն-95» ՍՊԸ-27,54 տոկոս/, որի դիմաց վճարվել է 4,858,799.4 հազ. դրամ:

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հավելվածի համաձայն «Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով» հունվար-հունիս ամիսներին նախատեսվել է կատարել 7,672,600.0 հազ. դրամի աշխատանքներ /1-ին եռամսյակ 3,650,000.0 հազ. դրամ/: Փաստացի կատարված աշխատանքների դիմաց վճարվել է 636,406.3 հազ. դրամ: Շեղումը կազմել է 7,036,193.7 հազ. դրամ:

Ծրագրի շրջանակում խորհրդատվական ծառայությունների՝ ''Տեխնիկական վերահսկողության'' ծառայությունների կատարման համար, 03.04.2018թվականին 42ամիս ժամկետով, 4,038.6 հազ. ԱՄՆ դոլար արժեքով /այդ թվում ԱԱՀ/ պայմանագիր է կնքել ,,Սաֆեջ''բաժնետիրական ընկերության հետ: 2020թվականի 1-ին կիսամյակում ընկերության կողմից իրականացվել է 242,8 հազ ԱՄՆ դոլարի ծառայություններ, որի դիմաց վճարվել է 362.2 հազ ԱՄՆ դոլար: Ծրագրի սկզբից մինչև 30.06.2020թվականը ներառյալ իրականացվել է 1,934.4 հազ. ԱՄՆ դոլարի ծառայություններ, որի դիմաց ըստ ներկայացված տեղեկատվության, վճարվել է 1,934.4 հազ. ԱՄՆ դոլար:

,,Սոցիալական անվտանգության աջակցություն'' ծառայությունների մատուցման համար 13.09.2017թվականին 15 ամիս ժամկետով՝ մինչև 13.12.2018թ., 198,294.9 հազ. դրամ արժեքով թիվ ADB/M-6/CS/QCBS/02 պայմանագիր է կնքել ''ԱԼՏԱ – ՎԻՊ'' ՍՊԸ-ի հետ, որի դիմաց պայմանագրի կնքման պահից մինչև 01.07.2020թվականը վճարվել է 150.4 հազ. ԱՄՆ դոլար:

''Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն'' ՊՈԱԿ-ի և '' ԱԼՏԱ ՎԻՊ'' ՍՊԸ-ի միջև 06.02.2019թվականին կնքվել է համաձայնագիր պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Կողմերը ելնելով այն հանգամանքից, որ ՀՕՏԾ իրականացման շրջանակներում 23 ազդագիր հողերի օտարումը իրականացվում է դատական կարգով և փոխհատուցման գումարի դատարանի դեպոզիտ հաշվին հանձնելու ու հաջորդ դատական հայցերը դատարան ներկայացնելու վերջնաժամկետն է 2018թ հոկտեմբերի 29-ը, իսկ պայմանագրի գործողության ժամկետը ավարտվում է 13.12.2018թվականին, 2019թվականի փետրվարի 6-ին՝ պայմանագրի ժամկետի ավարտից 54 օր հետո միայն պայմանագրում կատարել են փոփոխություն և պայմանագրի ժամկետի ավարտը երկարաձգել մինչև 2019թվականի օգոստոսի 13-ը:

Հաշվեքննության արդյունքում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ‘‘Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրի փաստացի ծախսը կազմել է 935,306.1 հազ.դրամ /692,561.7+242,744.4/, սակայն նախարարության կողմից ներկայացրած ‘‘Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի‘‘ հաշվետվությունում, որպես փաստացի կատարված ծախս նշվել է 797,566.1 հազ. դրամ, կամ 2020թվականի առաջին կիսամյակի փաստացի ծախսը պակաս է ցույց տրվել 242,744.4 հազ, դրամով:

Խորհրդատվական ծառայություններից ,,Աուդիտի’’ և ‘‘Նախագծային փոփոխությունների և արդիականացման խորհրդատվական ծառայությունների’’ ենթածրագրերի գծով 2020թվականի 1-կիսամյակում աշխատանքներ չի իրականացվել:

Հաշվեքննվող օբյեկտի արձագանքը

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի վերաբերյալ՝ «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի կողմից 2020թ. 1-ին կիսամյակի ընթացքում փաստացի ծախսերը կազմել են՝ 5113 հոդվածով՝ /կապիտալ ծախսեր/՝ 797,566.1 հազար ՀՀ դրամ և 4861 հոդվածով՝ 242,744.4 հազար ՀՀ դրամ: Սակայն ՀՀ գանձապետարանի հետ առկա տեխնիկական խնդիրների պատճառով հաշվետվություններով փաստացի ծախսերը ցույց են տրվել՝ 5113 հոդվածով /կապիտալ ծախսեր/՝ 797,566.1 հազար ՀՀ դրամ և 4861 հոդվածով՝ 174,547.3 հազար ՀՀ դրամ: Խնդիրը առկա է նաև 9 ամսվա հաշվետվության մեջ: Աճողական կարգով ճշգրտումը կներկայացվի տարեկան հաշվետվության մեջ՝ գանձապետարանի կողմից նոյեմբեր ամսին կատարված կարգավորումների հիման վրա:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ‘‘Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագիր վերաբերյալ ներկայացվել է բացատրություններ և պարզաբանումներ:

3. Տարրական ընդհանուր հանրակրթություն

Տարրական ընդհանուր հանրակրթության ծառայություններ մատուցելու համար ՀՀ պետական բյուջեից 2020թվականին նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 7,263,186.2 հազ. դրամ /7,259,109.4հազ. դրամ. սուբսիդիա, 4,076.8հազ. դրամ կենցաղային և հանրային սննդի նյութեր/ ոչ ֆինանսական պետական կազմակերպությունների համար: 2020թվաանի առաջին կիսամյակի համար ճշտված պլանով նախատեսել է հատկացնել 3,558,692.2 հազ. դրամ, /1-ին եռամսյակ 1,452,588.3հազ. դրամ/, դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը կազմել է 3,487,495.0 հազ. դրամ / 1-ին եռամսյակ 1,420,250.3 հազ. դրամ/ :

''Տարրական ընդհանուր հանրակրթություն'' ծրագրի շրջանակում պետք է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող է153 հանրակրթական ուսումնական հաստատություններում մատուցվեր պարտադիր կրթության առաջին մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովման ծառայություններ:

''ՀՀ 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի'' համաձայն ''Տարրական ընդհանուր հանրակրթության դասարանների սովորողների միջին տարեկան թիվը 2020 թվականի առաջին կիսամյակի ճշտված պլանով սահմանվել է 153,501 աշակերտ /1-ին եռամսյակ 47206 աշակերտ/, միջոցառման վրա կատարման ենթակա ճշտված ծախսը նախատեսվել է 14,916,152.2հազ. դրամ /1-ին եռամսյակ 1,452,588.3 հազ. դրամ/: Փաստացի աշակերտների թվաքանակը կազմել է 151,445 աշակերտ, ծախսը 14,451,777.4հազ. դրամ /1-ին եռամսյակ 1,420,250.3 հազ. դրամ/, տարբերությունը կազմել է 2055 աշակերտ՝ գումարով 464,374.8 հազ. դրամ:

''ՀՀ 2020թվականի պետական բյուջեի մասին'' ՀՀ օրենքով նախատեսված մի շարք ծրագրերով պետության կողմից Երևանի քաղաքապետին լիազորությունների պատվիրակման և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավունքների փոխանցման համար 30.01.2020թ կնքված թիվ 1 պայմանագրում, որի հիման վրա Երևանի քաղաքապետարանին է փոխացվել նախատեսված գումարները, չի ամրագրվել ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանը, ըստ որի Երևանի քաղաքապետարանը պատվիրակված ծրագրի միջոցառումների գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները սահմանված կարգով պետք է

ներկայացներ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հաշվեքննվող օբյեկտի արձագանքը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված Երևանի քաղաքապետի մեկնաբանությունը ''Տարրական ընդհանուր հանրակրթություն'', ''Հիմնական ընդհանուր հանրակրթություն'', ''Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ'', ''Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում'' և ''Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն'' ծրագրերի վերաբերյալ կայանում է նրանում, որ Երևանի քաղաքապետարանի կոմից, համաձայն ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Նորոշման 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգի, ներկայացվել է հաշվետվություն՝ ՀՀտարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հաշվեքննողների մեկնաբանությունը :

Արձանագրությունում նշվել է, որ կնքված պայմանագրերում չի ամրագրվել ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանը, ըստ որի Երևանի քաղաքապետարանը պատվիրակված ծրագրի միջոցառումների գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները սահմանված կարգով պետք է ներկայացներ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Ծրագրի վերաբերյալ առարկություններ չի ներկայացվել:

4. Հիմնական ընդհանուր հանրակրթություն

''Հիմնական ընդհանուր հանրակրթութուն'' ծրագրի համար ՀՀ պետական բյուջեից 2020թվականին նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 10,254,680.7 հազ. դրամ /10,248,635.8հազ. դրամ. սուբսիդիա, 6,044.9հազ. դրամ կենցաղային և հանրային սննդի նյութեր/, ոչ ֆինանսական պետական կազմակերպությունների համար: Համաձայն ՀՀ

պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության, 2020թվաանի առաջին կիսամյակի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 5,027,356.6 հազ. դրամ սուբսիդիա /1-ին եռամսյակ 2,052,072.5 հազ. դրամ/, դրամարկղային ծախսը կազմել է 4,895,244.1 հազ. դրամ/1-ին եռամսյակ 1,993,932.0հազ.դրամ հազ. դրամ./, փաստացի ծախսը՝ 4,897,144.0 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի համաձայն ''Հիմնական ընդհանուր հանրակրթության դասարանների սովորողների միջին տարեկան թիվը 2020թվականի 1-ին կիսամյակի ճշտված պլանով սահմանվել է 171,406 աշակերտ /1-ին եռամսյակում 53274 աշակերտ/, միջոցառման վրա նախատեսվել է կատարել 19,596,726.2 հազ. դրամի ծախս /1-ին եռամսյակում 2,052,072.5 հազ. դրամ/: 2020թվականի առաջին կիսամյակում սովորողների թիվը փաստացի կազմել է 168,978 աշակերտ /1-ին եռամսյակ 52,519աշակերտ/, կատարված ծախսը 18,954,353.0 հազ. դրամ: Տարբերությունը կազմել է 2428 աշակերտ՝ 642,372.7 հազ. դրամ ծախսով:

Սովորողների միջին գնահատականը գիտելիքների ստուգման արդյունքում տարեկան ճշտված պլանով և 2020թվականի 1-ին կիսամյակում նախատեսվել է 13 բալ, փաստացի սովորողների միջին գնահատականը կազմել է 8 բալ: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ում և Երևան քաղաքում գործում է գիտելիքների գնահատման 10 բալային համակարգ:

''Հայաստանի Հանրապետության 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին'' ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ''Հիմնական ընդհանուր հանրակրթություն'' ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված իրավունքները փոխանցվել են Երևանի քաղաքապետարանին:

''ՀՀ 2020թվականի պետական բյուջեի մասին'' ՀՀ օրենքով նախատեսված մի շարք ծրագրերով պետության կողմից Երևանի քաղաքապետին լիազորությունների պատվիրակման և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավունքների փոխանցման համար 30.01.2020թվականին կնքված թիվ 1 պայմանագրում, որի հիման վրա Երևանի քաղաքապետարանին է փոխացվել նախատեսված գումարները, չի ամրագրվել ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանը, ըստ որի Երևանի քաղաքապետարանը

պատվիրակված ծրագրի միջոցառումների գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները սահմանված կարգով պետք է ներկայացներ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հաշվեքննության օբյեկտի կողմից **''Հիմնական ընդհանուր հանրակրթություն''** ***ծրագրի վերաբերյալ առարկություններ կամ բացատրություններ չի ներկայացվել:***

5. Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ

''Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ'' մատուցելու համար ՀՀ պետական բյուջեից 2020թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,124,862.3հազ. դրամ սուբվենցիա: 2020թ-ի առաջին կիսամյակի համար ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 898,390.7 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը կազմել է 898,390 .7 հազ. դրամ:

''Հայաստանի Հանրապետության 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին'' ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն '' Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ'' ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված իրավունքները փոխանցվել են Երևանի քաղաքապետարանին:

Ըստ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի առաջին կիսամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի ''Երևան քաղաքի արտաքին լուսավորությամբ ապահովված փողոցների երկարությունը փաստացի կազմել է 1,678.3 կմ, նախատեսված 1,660կմ-ի փոխարեն, անհրաժեշտ է նշել, որ տարեկան ճշտված պլանի համաձայն նախատեսվել էր ապահովել 1,675 կմ երկարություն, իսկ արտաքին լուսավորությամբ ապահովված օբյեկտների փաստացի թիվը կազմել է 2,628հատ, նախատեսված 2,567հատի փոխարեն, տարեկան ճշտված պլանով նախատեսվել է ապահովել 2,570հատ օբյեկտի լուսավորություն:

Անհրաժեշտ է նշել, որ 2020 թվականի առաջին կիսամյակի համար պլանավորված բյուջեի ծախսը փոփոխման արդյունքում նվազել և 1,003,480.0հազ. դրամից դարձել է 898,390.7հազ. դրամ, սակայն քանակական ցուցանիշները չի փոփոխվել: Փաստացի կատարվել է պլանավորածից ավել աշխատանք, բայց ծախսը չի ավելացել:

2020 թվականի առաջին կիսամյակի համար պլանավորված բյուջեի ծախսի նվազեցումը նախարարության կողմից հաշվի չի առնվել և համապատասխան փոփոխություն չի կատարվել 2020թվականի հունվարի 30-ին նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված ''ՀՀ 2020թվականի պետական բյուջեի մասին'' ՀՀ օրենքով նախատեսված մի շարք ծրագրերով ''Երևանի քաղաքապետարանին նպատակային հատկացումների /սուբվենցիաների/ մասով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավունքների փոխանցման'' թիվ 1 պայմանագիրում'', որի հիման վրա Երևանի քաղաքապետարանին է փոխացվել ծրագրով նախատեսված գումարները:

Կնքված պայմանագրի 2.3.4 կետի համաձայն քաղաքապետարանը պարտավոր էր հատկացվող սուբվենցիայի շրջանակներում քաղաքապետարանի և ծրագիրն իրականացնող համապատասխան սուբյեկտների հետ պայմանագրեր կնքելիս այդ պայմանագրերի պատճենները 15-օրյա ժամկետում, իսկ 2.3.5 կետի համաձայն նպատակային ծրագրերի /սուբվենցիաների/ գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները և կատարված աշխատանքների հանձնման - ընդունման արձանագրության պատճենները ներկայացներ նախարարություն, սակայն քաղաքապետարանի կողմից նախարարություն ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել:

Անհրաժեշտ է նշել, որ հաշվեքննիչ պալատի պահանջը վերը նշված սուբվենցիաների գծով նախարարություն ներկայացվող ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների և կատարված աշխատանքների հանձնման - ընդունման արձանագրության պատճենների տրամադրման վերաբերյալ, նույնպես մնացել է անպատասխան:

''ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին'' ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի թիվ 1919-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ մասի համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված սուբվենցիայի տրամադրման պայմանագրով նախատեսված, սուբվենցիաների գումարների օգտագործման նկատմամբ Նախարարության

կողմից պայմանագրի 3.1 կետով սահմանված՝ պայմանագրի 2.3.4 և 2.3.5 կետերում նշված փաստաթղթերը ստանալու միջոցով, նախնական փաստաթղթային հսկողություն չի իրականացվել:

Հաշվեքննության օբյեկտի կողմից **'' Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ' '** ***ծրագրի վերաբերյալ առարկություններ կամ բացատրություններ չի ներկայացվել:***

6. Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում

«Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում» ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից 2020թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,801,071.0 հազ. դրամ սուբսիդիա:

2020 թվականի առաջին կիսամյակի համար ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,425,702.0 հազ. դրամ/1-ին եռ. 552,702.0հազ. դրամ/, ֆինանսավորումը, դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը կազմել է 1,425,702.0 հազ. դրամ / 1-ին եռ 552,690.0 հազ. դրամ/:

''Հայաստանի Հանրապետության 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին'' ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ''Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների'' ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախաարությանը վերապահված իրավունքները փոխանցվել են Երևանի քաղաքապետարանին:

Ծրագրի շրջանակում կնքվել է 1 գնում չհանդիսացող պայմանագիր (Պայմանագրի Մ-20/1 24.01.2020) «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հետ՝ գումարով 2,801,071.0 հազ. դրամ:

«ՀՀ 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվության համաձայն ծրագրով հունվար-հունիս ամիսներին նախատեսվել է փոխադրել 9,244.0 հազ. ուղևոր/ 1-ին եռ. 4,512.0/՝ գումարով 1,425.7 հազ. դրամ/ 1-ին եռ 552,702.0 հազ. դրամ/, որից արտոնություններից օգտվող 804.0 հազ. ուղևոր/ 1-ին եռ. 372,0 հազ. ուղևոր/,

փաստացի մետրոպոլիտենով փոխադրվել է 4,780.8 հազ. ուղևոր /1-ին եռ. 3,844.5 հազ. մարդ/, այդ թվում արտոնություններից օգտվող 289.2 հազ. ուղևոր/ 1-ին եռ.219,3 հազ. ուղևոր/, որի դիմաց վճարվել է 1,425.7 հազ. դրամ/ 1-ին եռ 552,690.0 հազ.դրամ /:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև 30.01.2020 թվականին կնքված թիվ 1 պայմանագրում չի ամրագրվել և չի կատարվել **ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի թիվ 1919-Ն որոշման** 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանը, ըստ որի Երևանի քաղաքապետարանը պատվիրակված ծրագրի միջոցառումների գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները սահմանված կարգով պետք է ներկայացներ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հաշվեքննության օբյեկտի կողմից ''Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում'' թեմայի վերաբերյալ առարկություններ չի ներկայացվել:

7. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր

''Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր''-ի համար ՀՀ պետական բյուջեից 2020թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 6,953,481.6հազ. դրամ, 2020թվաանի առաջին կիսամսյակի համար ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 4,172,086.1 հազ. դրամ (առաջին եռամսյակ 2,781,389.7 հազ. դրամ), դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 707,227.0 հազ. դրամ / 1-ին եռամսյակ 674,005.5 հազ. դրամ/:

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվության համաձայն «Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով» հունվար-հունիս ամիսներին նախատեսվել էր իրականացնել Գյումրի քաղաքի 12 փողոցների (միջինը 9.5մ լայնությամբ և 16.75 կմ. երկարությամբ) հիմնանորոգում, փաստացի իրականացվել է 8 փողոցների հիմնանորոգում, պակաս է կատարվել 4-ով, իսկ Գյումրի քաղաքի հարակից մայթերով (միջինում 4մ լայնությամբ) 12 հատ

փողոցների հիմնանորոգումից, փաստացի իրականացվել է 8 հարակից մայթերով փողոցների հիմնանորոգման աշխատանքներ, կամ պակաս է կատարվել 4-ով:

8. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա, Բ)

‘‘ Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագրի (Տրանշ Ա, Բ) համար ՀՀ պետական բյուջեից 2020թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,263,116.6հազ. դրամ: 2020թվաանի առաջին կիսամյակի համար ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,357,870.0 հազ. դրամ (առաջին եռամսյակ 905,246.6 հազ. դրամ), դրամարկղային ծախսը կազմել է 353,354.0հազ. դրամ, փաստացի ծախսը 72,726.0 հազ. դրամ:

«ՀՀ 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվության համաձայն հունվար-հունիս ամիսներին նախատեսվել և իրականացնել է Գյումրի քաղաքի 7 փողոցների (միջինը 9.5մ լայնությամբ և 8.75 կմ. երկարությամբ) և Գյումրի քաղաքի հարակից մայթերով (միջինում 4մ լայնությամբ) 7 փողոցների հիմնանորոգում, փաստացի իրականացվել է յուրաքանչյուրից 4 փողոցների հիմնանորոգում, պակաս է կատարվել յուրաքանչյուրից 3 փողոց:

Հաշվեքննվող օբյեկտի արձագանքը

Հաշվեքննության օբյեկտի անունից ‘‘Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագրի’’ վերաբերյալ կազմված արձանագրության մասով պատասխանել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարը:

«Գյումրու քաղաքային ճանապարհների» 1157 ծրագրի (այսուհետ՝ Ծրագրր) համապատասպանաբար 12017 և 12018 միջոցառումների շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակում իրականացման համար նախատեսված թվով 13 փողոցների և դրանց ենթակառուցվածքների շինարարական աշխատանքների կատարման նպատակով պայմանագրերը կնքվել են երկրորդ եռամսյակի վերջում, ինչը պայմանավորված է եղել Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) գնման ընթացակարգերի կազմակերպման ժամանակ առաջ

եկած տեխնիկական խոչընդոտներով, ինչպես նաև նոր կորոնավիրուսի հետևանքով առաջ եկած սահմանափակումներով:

Ինչ վերաբերվում է Ծրագրի հիշյալ միջոցառումների շրջանակներում նախատեսված գումարներից առաջին կիսամյակի ընթացքում կատարված վճարումներին ապա դրանք կատարվել են Ծրագրի նույն միջոցառումների շրջանակներում նախկինում կնքված պայմանագրերի ներքո իրականացված թվով 12 փողոցների հիմնանորոգման աշխատանքների համար ներկայացված կատարողական փաստաթղթերի հիման վրա՝ ամբողջ ծավալով:

Ծրագրի վարկային և դրամաշնորհային բաղադրիչների համապատասխան միջոցառումների մասով 2020 թվականի պետական բյուջեով իրականացված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը յուրաքանչյուր վճարման հետ ըստ կապալառուների ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Ցանկանում եմ տեղեկացնել նաև որ Ծրագրի շրջանակներում իրականացվող փողոցաշինական աշխատանքներ դիմաց ֆինանսավորումները կատարվում են Բանկի կողմից հատկացված վարկային և դրամաշնորհային միջոցներից, համապատասխանաբար 2/3 չափաբաժնով՝ 12017 միջոցառումից և 1/3 չափաբաժնով՝ 12018 միջոցառումից, այսինքն վերոհիշյալ պարզաբանումները ըստ չափաբաժինների վերաբերվում են համապատասխան միջոցառումներին, ինչը հաշվի չիառնվել Հաշվեքննիչ պալատի արձանագրությունում:

Հարկ եմ համարում նշել նաև, որ փողոցային լուսավորության համակարգի արդիականացման բաղադրիչի մասով հայտարարված մրցույթի արդյունքները ամփոփվելու են 2021 թվականի առաջին եռամսյակում, ինչ պայմանավորված է Բանկ գնման ընթացակարգերի կազմակերպման ժամանակ առաջ եկած տեխնիկական խոչընդոտներով, ինչպես նաև նոր կորոնավիրուսի հետևանքով առաջ եկած սահմանափակումներով:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Հաշվեքննության օբյեկտի կողմից ‘‘Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագրի’’ վերաբերյալ առարկություններ չի ներկայացվել: Ներկայացվել է բացատրություններ, իսկ ինչ վերաբերվում է հաշվեքննվողի կողմից նշած ծրագրի շրջանակներում իրականացվող փողոցաշինական աշխատանքների դրիմաց կատարվող չափաբաժիններին, ապա անհրաժեշտ է նշել, որ արձանագրությունում ընդհանրապես անդրադարձ չի եղել նշված խնդրին:

Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված արձագանքը չի ընդունվում:

9. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն

''Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի իրականացման համար 2020թվականին ՀՀ պետական բյուջեից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 9,233,794.8հազ. դրամ: 2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 4,574,016.0հազ. դրամ /1-ին եռամսյակ 1,927,280.7 հազ. դրամ/, դրամարկղային ծախսը կազմել է 1,160,216.0 հազ. դրամ, փաստացի ծախսը 2,284,612.0հազ. դրամ:

''Հայաստանի Հանրապետության 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին'' ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ''Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ '' ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված իրավունքները փոխանցվել են Երևանի քաղաքապետարանին:

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հավելվածի համաձայն հունվար-հանիս ամիսներին իրականացվել է ''Բաբաջանյան-Աշտարակի խճուղի'' 9.4 կմ երկարությամբ և 24 մ միջին լայնությամբ նոր ճանապարհահատվածի և ''Արգավանդ-Շիրակ'' 2.7 կմ երկարությամբ ճանապարհահատվածի /ներառյալ Հրազդան գետի վրա կամուրջի/ կառուցման՝ 2,284,6ի12.3 հազ. դրամի աշխատանքներ /1-ին եռամսյակ 510,885.0հազ. դրամ/: ''Բաբաջանյան-Աշտարակի խճուղի'' 9.4 կմ երկարությամբ և 24 մ միջին լայնությամբ նոր ճանապարհահատվածի և ''Արգավանդ-Շիրակ'' 2.7 կմ երկարությամբ ճանապարհահատվածի /ներառյալ Հրազդան գետի վրա կամուրջի/ կառուցման՝ համար 2020թվականի տարեկան պլանով նախատեսվել էր իրականացնել ամբողջ ծավալի համապատասխանաբար 20 և 50տոկոսի աշխատանքներ:

Ծրագրի վերաբերյալ 2020թվականի 2-րդ եռամսյակի համար նախարարության կողմից պահանջված տեղեկատվությունը չի տրամադրել, ուստի հաշվեքննությունը անբողջությամբ չի իրականացվել:

''ՀՀ 2020թվականի պետական բյուջեի մասին'' ՀՀ օրենքով նախատեսված մի շարք ծրագրերով պետության կողմից Երևանի քաղաքապետին

լիազորությունների պատվիրակման և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավունքների փոխանցման համար 30.01.2020թ կնքված թիվ 1 պայմանագրում, որի հիման վրա Երևանի քաղաքապետարանին է փոխացվել նախատեսված գումարները, չի ամրագրվել ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանը, ըստ որի Երևանի քաղաքապետարանը պատվիրակված ծրագրի միջոցառումների գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները սահմանված կարգով պետք է ներկայացներ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

''Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն'' ծրագրի վերաբերյալ առարկություններ չի ներկայացվել:

10. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ

Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիրը» շրջանակում, իրականացվել են թվով 8 դրպոցների կառուցման աշխատանքներ: Ծրագիրն իրականացնում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (Այսուհետ՝ ՀՏԶՀ): Համաձայն կատարողական-հաշվետվությանների, հավեքննությունը ընդգրկող ժամանակաշրջանում կատարվել է 1,288,408.20 հազ.դրամի աշխատանք, փաստացի վճարվել է 989,154.40 հազ.դրամ: Մանրամասները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

«Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիրը» շրջանակում կառուցվող դպրոցներ

Հազ. դրամ

/h	Օբյեկտի անվանումը	Փաստացի ծախսը (կատարողական)	Վճարում
	Վանաձորի թիվ 7 հիմնական դպրոց		

		9,441.20	8,969.10
	Գավառի թիվ 2 հիմնական դպրոց	388,797.20	281,209.20
	Երևանի թիվ 153 հիմնական դպրոց	0.00	64,757.60
	Կապանի թիվ 7 հիմնական դպրոց	98,304.00	93,388.80
	Նոր Խարբերդի թիվ 2 միջնակարգ դպրոց	91,238.90	86,676.90
	Երևանի թիվ 135 հիմնական դպրոց	265,181.40	185,627.10
	Վայոց Ձորի մարզի ք. Եղեգնաձորի թ.1 դպրոց	146,443.50	102,510.40
	Վ.Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոց	152,207.40	106,742.80
	Մխիթար Հերացու անվան ավագ դպրոցի վերակառուցում և նոր մասնաշենքի կառուցում	136,794.60	59,272.50
	Ընդամենը	**1,288,408.20**	**989,154.40**

Աշխատանքներն իրականացվել են հաշվեքննությունը ընդգրկող ժամանակաշրջանից առաջ, ՀՏՀՀ-ի և կապալառու ընկերությունների միջև, կնքված պայմանագրերի համաձայն: Պայմանագրերը բաղկացած են պայմանագրի ընդհանուր պայմաններիից (այսուհետև՝ ՊԸՊ), պայմանագրի հատուկ պայմաններիից (այսուհետև՝ ՊՀՊ), և հավելվածներից:

1. ՊԸՊ 36.1 կետի պահանջների հետ անհամապատասխանություն

Համաձայն ՊԸՊ 36.1 կետի, աշխատանքների ավարտի նախատեսված ժամկետը պետք է երկարացվի, եթե կատարվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների այնպիսի փոփոխություն, որը հնարավորություն չի տալիս աշխատանքներն ավարտել նախատեսված օրը, առանց հավելյալ ծախսերի:

ՊՀՊ 1.1(w) կետով սահմանված է աշխատանքների ավարտի ժամկետը: Նշված ժամկետը երկարացվել է, համաձայն ՀՏՀՀ-ի և համապատասխան կապալառու ընկերությունների միջև կնքված պայմանագրի փոփոխության համաձայնագրերի:

Աշխատանքների ավարտի ժամկետը երկարացվել է այնպիսի հիմնավորումներով, որոնք, ըստ էության, չեն առնչվում պայմանագրի կատարման

հետ: Մասնավորապես, հիմնավորվել է 2020թ հունվար և փետրվար ամիսների օդի ցածր ջերմաստիճանով, կամ նշվել է, որ եղանակային պայմաններից ելնելով հնարավոր չէ իրականացնել ասֆալտբետոնե աշխատանքները, կամ արտասահմանից պատվիրված դռները մնացել են Լարսի լեռնանցքում:

Աշխատանքների ավարտի ժամկետի երկարացումը հիմնավորվել է նաև, COVID-19 համավարագով պայմանավորված, արտակարգ դրության ընթացքում շինարարական աշխատանքների իրականացման սահմանափակմամբ: Հարկավոր է նշել, որ աշխատանքների ավարտի ժամկետը երկարացվել է ավելի շատ օրերի քանակով, քան սահմանված է պարետի համապատասխան որոշումներով:

2. ՊԸՊ 36.2 կետի պահանջների հետ անհամապատասխանություն

Համաձայն ՊԸՊ 36.2 կետի, եթե կապալառուն վաղօրոք չնախազգուշացնի ուշացման մասին, կամ չհամագործակցի ուշացման խնդիրը լուծելու հարցում, այդ դեպքում ուշացումը չի դիտարկվի ավարտի նոր ժամկետը գնահատելիս:

ՊՀՊ 1.1(w) կետով սահմանված է աշխատանքների ավարտի ժամկետը: ՊԸՊ 40.1 կետի համաձայն, կապալառուն պետք է հնարավորինս շուտ զգուշացնի այն դեպքերի և հանգամանքների մասին, որոնք կարող են ձգձգել աշխատանքների իրականացումը:

Կապալառու ընկերությունը դիմել է ՀՏՋՀ-ին՝ ավարտի ժամկետը վերանայելու և ավարտի ժամկետ նշանակելու խնդրանքով: Գրությունում, մասնավորապես, նշվել է, որ աշխատանքների հենց սկզբից՝ 2017թ օգոստոսից, ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, որոնք ձգձգել են աշխատանքները, և աշխատանքները 2020թ փետրվարին չեն կարող ավարտվել: Բոլոր աշխատանքների իրականացման համար պայմանագրով նախատեսվել է 900 օր: Կապալառուն, ավարտի վերջնաժամկետը վերանայելու խնդրանքով դիմել է աշխատանքների մեկնարկից հետո 884-րդ օրը: Այսինքն, կապալառուն, ավարտի վերջնաժամկետի հավանական ուշացման վերաբերյալ, դեռևս 2017թ-ից իրեն հայտնի դարձած դեպքերի և հանգամանքների մասին, ՀՏՋՀ-ին տեղեկացրել է 2020թ-ին՝ վերջնաժամկետի ավարտից ընդամենը 6 օր առաջ: ՀՏՋՀ-ի կողմից սահմանվել է ավարտի նոր վերջնաժամկետ:

3. ՊԸՊ և ՊՀՊ 35.3 կետի պահանջների հետ անհամապատասխանություն

Համաձայն ՊԸՊ և ՊՀՊ 35.3 կետի, կապալառուն պետք է թարմացված ծրագիրը ներկայացնի ծրագիր ղեկավարի հաստատմանը 90 օրյա հաճախականությամբ:

ՊԸՊ 35.2 կետի համաձայն, ծրագրի մասին թարմ տեղեկատվությունները (թարմասված ծրագիր) պետք է ցույց տան յուրաքանչյուր գործողության իրական առաջընթացը և այդ առաջընթացի ազդեցությունը մնացած աշխատանքի ժամկետիների, ինչպես նաև գործողությունների հաջորդականության վրա:

Ծրագրի ղեկավարի կողմից ուշադրություն չի դարձվել ծրագրի իրականացման ընթացքի վրա: ՊԸՊ 1.1(cc) կետի համաձայն վերջինս հանդիսանում է աշխատանքների իրականացման և պայմանագրի կատարման վերահսկման համար պատասխանատու անձ: Հաշվեքննության շրջանակում նշված թարմացված ծրագրերը չեն տրամադրվել:

Հաշվեքննվող օբյեկտի արձագանքը

- *<u>ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցում:</u>*

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում COVID-19-ով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում պարետի որոշմամբ շինարարական աշխատանքների իրականացումը արգելվել է 20 օրով, սակայն համավարակի առկայությունը խոչընդոտել է շինարարական աշխատանքների արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես բռնկման դեպք է եղել շինարարական հրապարակում, որը հանգեցրել է նաև մեկ աշխատակցի մահվան: Պարետի համապատասխան որոշմամբ որոշակի ժամանակով սահմանափակվել է Սևան քաղաք մուտքն ու ելքը, իսկ շինարարության իրականացման գործընթացում ներգրավված են եղել նաև Սևան համայնքի բնակիչներ: Հետևաբար ՀՏՋՀ-ի կողմից վերոգրյալ գործոնները հաշվի են առնվել:

Հաշվեքննության արձանագրության մեջ նշված այն հանգամանքի վերաբերյալ, որ 2020թ հունվար և փետրվար ամիսների օդի ցածր ջերմաստիճանը չէր կարող հանդիսանալ վերջնաժամկետի երկարացման հիմնավոր պատճառ հայտնում ենք, որ համաձայն պայմանագրի 36.1 կետի աշխատանքների ավարտի նախատեսված ժամկետը պետք է երկարացվի, ***<u>եթե տեղի ունենա այնպիսի փոխհատուցման միջոցառում կամ կատարվի այնպիսի փոփոխություն</u>***, որ հնարավոր չլինի աշխատանքները ավարտել նախատեսված օրը: Քանի որ ի սկզբանե հնարավոր չէր պլանավորել օդի հնարավոր ցածր ջերմաստիճանի առկայությունը ՀՏՋՀ-ն այն գնահատել է ժամանակի փոխհատուցման միջոցառում, որի հիմքում դրվել է պետական լիազոր մարմնից ստացված տեղեկատվությունը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ պայմանագրի ժամկետի երկարացման հանգամանք է հանդիսացել նաև լրացուցիչ աշխատանքների իրականացման գործոնը, որոնք նախատեսված չեն եղել սկզբնական ծավալներում:

Ծրագրի թարմացման գործընթացի վերաբերյալ հայտնում ենք, որ դրանք թարմացվել են ըստ անհրաժեշտության, նկատի ունենալով յուրաքանչյուր կապալառուի կողմից աշխատանքների իրականացման ընթացքը:

Հայտնում ենք նաև, որ այսուհետ կձեռնարկվեն պատշաճ միջոցառումներ՝ եռամսյա պարբերությամբ ծրագրերի իրականացման ընթացքի թարմացման ուղղությամբ:

- *Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի թիվ 2 դպրոցի կառուցում*

Հայտնում ենք, որ 27.02.2020 թվականին ստորագրված զեկուցագրի հիման վրա համաձայնագիր է կնքվել 02.03.2020 թվականին, որի համաձայն պայմանագրի գործունեության ժամկետը երկարաձգվել է մինչև 25.03.2020 թվականը:

Հաշվետվությունում ներկայացված աշխատանքների վերջնաժամկետի ավարտման (01.03.2020թ) հաջորդ օրը պայմանագրի ավարտի ժամկետի երկարացման փոփոխությունը իրականացնելու հանգամանքի վերաբերյալ հայտնում ենք, որ դրա պատճառը հանդիսանում է այն գործոնով, որ 01.03.2020թ. եղել է ոչ աշխատանքային օր (կիրակի), որով և պայմանավորված պայմանագրի ժամկետը երկարաձգվել է հաջորդ աշխատանքային օրը:

Պայմանագրի կատարման ժամկետի երկարացման մնացած պատճառները գնահատելիս ՀՏՋՀ-ն առաջնորդվել է պայմանագրի 36.1 կետի դրույթով, այն է աշխատանքների ավարտի նախատեսված ժամկետը պետք է երկարացվի, ***եթե տեղի ունենա այնպիսի փոխհատուցման միջոցառում կամ կատարվի այնպիսի փոփոխություն***, որ հնարավոր չլինի աշխատանքները ավարտել նախատեսված օրը: Պայմանագրի ժամկետներ երկարաձգման զեկուցագրերով ներկայացված հիմնավորումները ՀՏՋՀ-ի կողմից համարվել են ժամանակի փոխհատուցման միջոցառումներ, որոնք բխում են պայմանագրի վերոնշյալ կետի մեկնաբանությունից:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում COVID-19-ով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում պարետի որոշմամբ շինարարական աշխատանքների իրականացումը արգելվել է որոշակի ժամկետով, սակայն համավարակի առկայությունը խոչընդոտել է նաև շինարարական աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

Հայտնում ենք նաև, որ պարետի 2020 թվականի ապրիլի 12-ի N 37 որոշմամբ թույլատրվել է իրականացնել շինարարական աշխատանքներ, սակայն արգելված է մնացել շինարարության ավարտական փուլի աշխատանքների իականացումը, և

քանի որ Նոր Խարբերդ գյուղի թիվ 2 դպրոցի կառուցումը գտնվել է ավարտական փուլում հնարավոր չի եղել այն մեկնարկել, այդ իսկ պատճառով:

Ծրագրի թարմացման գործընթացի վերաբերյալ հայտնում ենք, որ դրանք թարմացվել են ըստ անհրաժեշտության, նկատի ունենալով յուրաքանչյուր կապալառուի կողմից աշխատանքների իրականացման ընթացքը:

Հայտնում ենք նաև, որ այսուհետ կձեռնարկվեն պատշաճ միջոցառումներ՝ եռամսյա պարբերությամբ ծրագրերի իրականացման ընթացքի թարմացման ուղղությամբ:

- *Երևանի թիվ 135 դպրոցի կառուցում*

Հայտնում ենք, որ 2017թ իրականացված լրացուցիչ աշխատանքների վերաբերյալ կապալառուն ՀՏՋՀ-ին է դիմել և կատարված աշխատանքների համար վճարվել 2017 թվականին: Ինքնին լրացուցիչ աշխատանքների կատարումը ենթադրում էր պայմանագրի կատարման ժամկետի ավելացում, սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները դեռ նոր էին մեկնարկել, և հետագայում հնարավոր էր ի հայտ գային այնպիսի հանգամանքներ, որոնք կարող էին բերել ժամկետների կրճատման կամ ավելի երկարացման, ՀՏՋՀ-ն նպատակահարմար չի համարել երկարացնել պայմանագրի կատարման ժամկետը տվյալ փուլում:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում COVID-19-ով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում պարետի որոշմամբ շինարարական աշխատանքների իրականացումը արգելվել է 20 օրով, սակայն համավարակի առկայությունը խոչընդոտել է շինարարական աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

Խնդրում եմ նաև նկատի ունենալ, որ երկարացման ժամկետի մեջ հաշվի է առնվել նաև դադարեցված շինարարությունը մեկնարկելու նպատակով կապալառուի կողմից տեխնիկական և աշխատանքային ռեսուրսների մոբիլիզացիայի համար անհրաժեշտ ժամանակահատվածը:

Բացի այդ, ժամկետի երկարաձգման պատճառ է հանդիսացել նաև լրացուցիչ աշխատանքների իրականացումը, մասնավորապես կառուցվել է ոռոգման ջրագիծ, որը ի սկզբանե նախատեսված չի եղել:

Ծրագրի թարմացման գործընթացի վերաբերյալ հայտնում ենք, որ դրանք թարմացվել են ըստ անհրաժեշտության, նկատի ունենալով յուրաքանչյուր կապալառուի կողմից աշխատանքների իրականացման ընթացքը:

Հայտնում ենք նաև, որ այսուհետ կձեռնարկվեն պատշաճ միջոցառումներ՝ եռամսյա պարբերությամբ ծրագրերի իրականացման ընթացքի թարմացման ուղղությամբ:

- *Սյունիքի մարզի Կապան քաղաքի թիվ 7 դպրոցի կառուցում*

Համաձայն հաշվեքննության արձանագրության դպրոցի կառուցման պայմանագրի ժամկետների երկարաձգումը համարվել է ոչ պատշաճ հիմնավորված, որի առնչությամբ հայտնում ենք, որ պայմանագրի կատարման ժամկետի պատճառները գնահատելիս ՀՏՋՀ-ն առաջնորդվել է պայմանագրի 36.1 կետի դրույթով, այն է աշխատանքների ավարտի նախատեսված ժամկետը պետք է երկարացվի, ***եթե տեղի ունենա այնպիսի փոխհատուցման միջոցառում կամ կատարվի այնպիսի փոփոխություն***, որ հնարավոր չլինի աշխատանքները ավարտել նախատեսված օրը: Պայմանագրի ժամկետներ երկարաձգման զեկուցագրերով ներկայացված հիմնավորումները ՀՏՋՀ-ի կողմից համարվել են ժամանակի փոխհատուցման միջոցառում, որը բխում է պայմանագրի վերոնշյալ կետի մեկնաբանությունից:

Դպրոցի տարածքում առկա էլ.ենթակայանի տեղափոխման պատճառով պայմանագրի կատարման ժամկետի երկու անգամ երկարաձգման վերաբերյալ հայտնում ենք, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից նախատեսվում էր ենթակայանը տեղափոխել 3-ամսյա ժամկետում, որը սակայն չիրականացվեց: ՏՀՋՀ-ն ստիպված էր ևս մեկ անգամ երկարաձգել պայմանագրի կատարման ժամկետը տվյալ հիմնավորմամբ, քանի որ ենթակայանի առկայությունը խանգարում էր բարեկարգման աշխատանքների իրականացմանը:

Ծրագրի թարմացման գործընթացի վերաբերյալ հայտնում ենք, որ դրանք թարմացվել են ըստ անհրաժեշտության, նկատի ունենալով յուրաքանչյուր կապալառուի կողմից աշխատանքների իրականացման ընթացքը:

Հայտնում ենք նաև, որ այսուհետ կձեռնարկվեն պատշաճ միջոցառումներ՝ եռամսյա պարբերությամբ ծրագրերի իրականացման ընթացքի թարմացման ուղղությամբ:

- *Երևանի Վ.Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոցի կառուցում*

Ծրագրի թարմացման գործընթացի վերաբերյալ հայտնում ենք, որ դրանք թարմացվել են ըստ անհրաժեշտության, նկատի ունենալով յուրաքանչյուր կապալառուի կողմից աշխատանքների իրականացման ընթացքը:

Հայտնում ենք նաև, որ այսուհետ կձեռնարկվեն պատշաճ միջոցառումներ՝ եռամսյա պարբերությամբ ծրագրերի իրականացման ընթացքի թարմացման ուղղությամբ:

- *«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՀՄԴ-ի շենքի վերակառուցում և նոր մասնաշենքի կառուցում*

Ծրագրի թարմացման գործընթացի վերաբերյալ հայտնում ենք, որ դրանք թարմացվել են ըստ անհրաժեշտության, նկատի ունենալով յուրաքանչյուր կապալառուի կողմից աշխատանքների իրականացման ընթացքը:

Հայտնում ենք նաև, որ այսուհետ կձեռնարկվեն պատշաճ միջոցառումներ՝ եռամսյա պարբերությամբ ծրագրերի իրականացման ընթացքի թարմացման ուղղությամբ:

- *Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 7 հիմնական դպրոցի կառուցում*

Ընդունված է ի գիտություն:

- *Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 դպրոցի կառուցում*

Ծրագրի թարմացման գործընթացի վերաբերյալ հայտնում ենք, որ դրանք թարմացվել են ըստ անհրաժեշտության, նկատի ունենալով յուրաքանչյուր կապալառուի կողմից աշխատանքների իրականացման ընթացքը:

Հայտնում ենք նաև, որ այսուհետ կձեռնարկվեն պատշաճ միջոցառումներ՝ եռամսյա պարբերությամբ ծրագրերի իրականացման ընթացքի թարմացման ուղղությամբ:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ'' ծրագրի վերաբերյալ առարկություններ չի ներկայացվել, ներկայացվել է բացատրություններ:

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1049-11001 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների ծրագիր.

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ցանկում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային որոշ ճանապարհների ըստ նշանակության դասակարգումը չի համապատասխանում ''Ավտոմոբիլային ճանապրահների մասին'' ՀՀ օրենքի 3-րդ

հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին: Մասնավորապես.

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ մասի համաձայն Կապան, Իջևան և Արմավիր քաղաքների տարածքներում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների միայն երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքներն են իրականացվում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից, այնինչ կատարողականներով հավարկվել է ամբողջ ճանապարհածածկույթի համար, ինչի արդյունքում ավել է հաշվարկվել **7,981.2 հազ. դրամ:**

- Որպես միջպետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 387 կմ ավտոճանապարհները հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ և դրանց պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են, որպես հանրապետական նշանակության ավտոճանապարհների պայմանագրային գները **55,730.4 հազար դրամով**:

167,8 կմ ավտոճանապարհներ հանդիսանում են *տեղական նշանակության* ճանապարհներ, որոնց պետական ճանապարհային մարմինը տնօրինման մասով ոչ թե ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է այլ ՀՀ մարզպետները: Բացի այդ պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես տեղական նշանակության ավտոճանապարհների համար առաջարկած պայմանագրային գները **37,982.3 հազ դրամով**:

- 34,5 կմ երկարությամբ ճանապարհներ, որոնց պահպանման համար վճարվել է ***10,594.7 հազ.*** դրամ, հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ:

- Որպես հանրապետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 569,3 կմ ճանապարհները հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ որոնց պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է **372,168.9 հազ. դրամ**:

- Հ 28-Մեղրաձոր-Մարգահովիտ-Մ8 ճանապարհը անցանելի չէ, չի ապահովում տրանստորտային հաղորդակցություն, սակայն 2020 թ. դրա ձմեռային պահպանության համար հաշվարկվել է 1,024.0 հազ. դրամ:

- 58,7 կմ-ն դաշտամիջյան ճանապարհներ են, որոնցից 37,1 կմ երկարությամբ ճանապարհահատվածների պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է **23,522.5 հազ. դրամ,** այնինչ ՀՀ օրենսդրությամբ այդ ճանապարհների պահպանություն չի նախատեսվում:
- 7.6 կմ-ն Հրազդան քաղաքի փողոց է, որի պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է **5,334.9 հազ. դրամ:**

2020 թվականի համար ''Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և անվտանգ երթևեկության ծառայություններ'' ծրագրով համաձայնագրերը կապալառու կազմակերպությունների հետ կնքվել են 2020թ. փետրվարին, այսինքն 2020 թվականի հունվար ամսին, պահպանում իրականացնող ընկերությունները պահպանում են իրականացրել չունենալով չափորոշիչներ, թե ինչ մակարդակի պահպանություն պետք է իրականացնեն, իսկ պատվիրատուն ընդունել է այդ աշխատանքների կատարման համար կատարողականները և փաստաթղթավորելով, որ պահպանության ընթացքում ապահովվել են սահմանված չափանիշները՝ չունենալով այդ չափանիշները :

2. 2020թվականի առաջին կիսամյակում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ''Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագրի փաստացի ծախսը ''Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի'' հաշվետվությունում, որպես փաստացի կատարված ծախս պակաս է ցույց տրվել 242,744.4 հազ, դրամով:

IV. «ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ»

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

	Առաջարկություն[2]	Ընդունելի է/	Կատարված է/	Հիմնավորումներ[5]

[2] Ներկայացնել առաջարկության բովանդակությունը /լրացվում է հաշվեքննողների կողմից/:

		Ընդունելի չէ[3]	Ընթացքում է[4]	
.1	ՀՀ կառավարության 13.02.2014 թվականի թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում՝ ըստ նշանակության դասակարգված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների դասակարգումը համապատասխանեցնել ‘‘Ավտոմոբիլային ճանապրահների մասին’’ ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերով սահմանված պահանջներին:			
.2.	• ‘‘ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների			

[5] Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքները, պարզաբանումներ չընդունման և չկատարման պատճառների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ Հաշվեքննիչ պալատի ներկայացրած առաջարկությունների կատարման ժամանակացույցով ու պատասխանատուների ցանկով /լրացվում և ներկայացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

[3] Ընտրել երկու տարբերակներից մեկը՝ համապատասխանաբար, առաջարկությունն ընդունելի կամ ոչ ընդունելի լինելու դեպքում /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

[4] Լրացվում է միայն ընդունելի առաջարկությունների դեպքում՝ ընտրելով երկու տարբերակներից մեկը՝ համապատասխանաբար, ամբողջությամբ կատարված լինելու և դեռևս կատարման ընթացքում լինելու դեպքում /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

	պահպանում և անվտանգ երթևեկության ծառայություններ'' մատուցելու համար կապալառու կազմակերպությունների հետ համաձայնագրերը կնքել տարվա սկզբից, որպեսզի աշխատանքները իրականացվեն պահպանման մակարդակների չափանիշներին համապատասխան:			

	Անհամապատասխանություն/ խեղաթյուրում[6]	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է[7]	Հիմնավորումներ[8]
.1.	2020 թվականի հունվար և փետրվար ամիսներին պահպանում իրականացնող ընկերությունները չունենալով սահմանված պահպանման մակարդակների չափանիշներ, պահպանում են իրականացրել չիմանալով թե, որ ճանապարհների և որ ճանապարհահատվածների վրա, ինչ մակարդակի պահպանություն պետք է իրականացնեն		

[6] Ներկայացնել անհամապատասխանության/խեղաթյուրման հակիրճ էությունը /լրացվում է հաշվեքննողների կողմից/:

[7] Ընտրել երեք տարբերակներից մեկը /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

[8] Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքները վերացման ուղղությամբ, պարզաբանումներ չվերացման պատճառների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ վերացման ժամանակացույցով ու պատասխանատուների ցանկով /լրացվում և ներկայացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

.2.	ՀՀ կառավարության 13.02.2014 թվականի թիվ 265-Ն որոշմամբ՝ ըստ նշանակության դասակարգված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներից, որոշ ճանապարհների դասակարգումը չի համապատասխանում ''Ավտոմոբիլային ճանապրահների մասին'' ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին:		
.3.	''ՀՀ 2020թվականի պետական բյուջեի մասին'' ՀՀ օրենքով նախատեսված մի շարք ծրագրերով պետության կողմից Երևանի քաղաքապետին լիազորությունների պատվիրակման և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավունքների փոխանցման համար 30.01.2020թ կնքված թիվ 1 պայմանագրում, չի ամրագրվել և չի կատարվել ՀՀ կառավարության 26.12.2019թվականի թիվ 1919-Ն որոշման 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանը, ըստ որի Երևանի քաղաքապետարանը պատվիրակված ծրագրի միջոցառումների գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում ՀՀ 2020թվականի պետական բյուջեի		

	կատարման մասին հաշվետվությունները սահմանված կարգով պետք է ներկայացներ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:		
.4.	''Հիմնական ընդհանուր հանրակրթություն'' ծրագրի համար սովորողների միջին գնահատականը տարեկան ճշտված պլանով և հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել է ապահովել 13 բալ, այն դեպքում երբ ՀՀ-ում և Երևան քաղաքում գործում է գիտելիքների գնահատման 10 բալային համակարգ:		
.5.	2020թվականի հունվար փետրվար ամիսների համար Հիմնական ընդհանուր հանրակրթության գծով մատուցված ծառայությունների դիմաց դպրոցներին վճարվող սուբսիդիայի գումարը վճարվել է 3,550.0հազ. դրամով ավելի:		
.6.	''ՀՀ 2020թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին'' ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի թիվ 1919-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ մասի համաձայն ՀՀ տարածքային		

	կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված սուբվենցիայի տրամադրման պայմանագրով նախատեսված, սուբվենցիաների գումարների օգտագործման նկատմամբ Նախարարության կողմից նախնական փաստաթղթային հսկողություն չի իրականացվել, պայմանագրի 3.1 կետով սահմանված՝ պայմանագրի 2.3.4 և 2.3.5 կետերում նշված փաստաթղթերը չներկայացնելու հետևանքով:		
.7.	‘‘Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ‘‘, Տարրական և Հիմնական ընդհանուր հանրակրթության ծառայություններ ծրագրերի գծով 2020թվականի առաջին եռամսյակում փաստացի կատարված աշխատանքները չեն համապատասխանում 2020թվականի առաջին եռամսյակում նախարարության կողմից ներկայացրած ‘‘Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի‘‘ հաշվետվություններում արտացոլված ցուցանիշներին:		

V. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ կառավարությանը՝

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ի թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում՝ ըստ նշանակության դասակարգված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների դասակարգումը համապատասխանեցնել «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պահանջներին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝

«ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և անվտանգ երթևեկության ծառայություններ» մատուցելու համար կապալառու կազմակերպությունների հետ համաձայնագրերը կնքել տարվա սկզբից, որպեսզի աշխատանքները իրականացվեն պահպանման մակարդակների չափանիշներին համապատասխան:

Հաշվեքննության ընթացքում ձեռք ենք բերել բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն: